ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 100

ք. Երևան 02.02.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԱՐՄՏԵՔՍԻԼ» ՍՊ (ՀՎՀՀ 00498117; գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Եղիշե Թադևոսյան 5շ 34բն) ընկերության միջև 11.05.2023թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-23-22/5-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ԱՐՄՏԵՔՍԻԼ» ՍՊԸ-ն 2023թ. 3-րդ եռամսյակում պետք է մատակարարեր ընդհանուր 1 000 հատ պաշտպանիչ հատուկ ակնոցներ (պաշտպանիչ ակնոցներ), որոնք մատակարվել են 14.11.2023թ., և վերջիններս չեն համապատասխանել Պայմանագրով պահանջվող տեխնիկական պահանջներին:

Հաշվի առնելով, որ «ԱՐՄՏԵՔՍԻԼ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի ամբողջությամբ լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը՝ որոշում եմ՝ «ԱՐՄՏԵՔՍԻԼ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ